


75 Քարտեզի վրա ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Ա տառով:

- 1) եվրոպեոիդ
- 2) ավստրալոիդ
- 3) նեգրոիդ
- 4) մոնղոլոիդ



76 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են հս.լ. 18° և արմ.երկ. 5°: Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը սեպտեմբերի 23-ին:

(77-78) Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 720 մմ է, գագաթին՝ 520 մմ է: Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 18° է: (Հաշվարկը կատարել 5°-ով):

77 Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

78 Որոշել օդի ջերմաստիճանը Լեռան գագաթին:

(79-80) Երկրի բնակչության թիվը 80 000, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1400, արտագաղթը՝ 600:

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել երկրի բնակչության թիվը մեկ տարի անց:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2011

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չնոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա ՄԱԿԱՐԴԱԿ



1) Նկարում պատկերված է Երկրի դիրքը Արեգակի նկատմամբ.

- 1) հունիսի 22-ին
- 2) սեպտեմբերի 23-ին
- 3) նարտի 21-ին
- 4) դեկտեմբերի 22-ին

2) Երկու քաղաքներ գտնվում են նույն միջօրեականի վրա, նրանց միջև հեռավորությունը 50° է: Նրանց միջև իրական հռավորությունը կլինի.

- 1) 4440 կմ
- 2) 6660 կմ
- 3) 3330 կմ
- 4) 5550 կմ

3) Հասարակածի երկարությունը կազմում է.

- 1) 20067 կմ
- 2) 12000 կմ
- 3) 30076 կմ
- 4) 40076 կմ

4) Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Երկրի միջին շառավիղը հավասար է 6371 կմ:
- 2) Հյուսիսային և հարավային բևեռներն իրար միացնող երևակայական գիծը կոչվում է հասարակած:
- 3) Երկիրը Արեգակի շուրջը պտտվում է շրջանաձև ուղեծրով:
- 4) Լոնդոն քաղաքը գտնվում է Երրորդ ժամային գոտում:

5) Երկրակեղևի և միջնապատյանի վերին կարծր շերտը միասին կոչվում է.

- 1) միջուկ
- 2) քարոլորտ
- 3) գեոսինկլինալ
- 4) պլատֆորմ

6) Մթնոլորտի երկրամերձ շերտում ջրային մանրագույն կաթիլների կուտակումը կոչվում է.

- 1) եղյամ
- 2) մառախուղ
- 3) ամպ
- 4) ցող


7) Այն սահմանային գիծը, որը իրարից է բաժանում հարևան գետերի ջրավաք ավազաններն, կոչվում է.

- 1) գետահովիտ
- 2) գետի թեքություն
- 3) գետի անկում
- 4) ջրբաժան գիծ

74

Կլիմայական քարտեզի վրա 4Ա, 4Բ, 4Գ թվերով պատկերված կլիմայական գոտին է.

- 1) արևադարձային
- 2) մերձարևադարձային
- 3) բարեխառն
- 4) մերձհասարակածային



- 69) Ինչն ընդհանուր է Տավուշի և Սյունիքի մարզերի համար.
- 1) Ջարգացած է ծխախոտագործությունը
 - 2) Ուրբանիզացման մակարդակը բարձր է հանրապետության միջին ցուցանիշից
 - 3) Սահմանակից են Ադրբեջանին
 - 4) Ջարգացած է լեռնահանքային արդյունաբերությունը

70) Ազգային պարկեր ունեցող մարզերն են.

- 1) Գեղարքունիքը և Տավուշը
- 2) Կոտայքը և Արմավիրը
- 3) Շիրակը և Վայոց ձորը
- 4) Արագածոտնը և Արարատը

71) Այլընտրանքային էներգառեսուրսների օգտագործմամբ հայտնի երկիր է.

- 1) Իսլանդիան
- 2) Գերմանիան
- 3) Ուկրաինան
- 4) Չինաստանը

72) Սնոգն առավել բնորոշ է.

- 1) Վաշինգտոնին
- 2) Ժնևին
- 3) Վենետիկին
- 4) Լոնդոնին

73) Բնական միջավայրի մոնիթորինգ է.


- 1) Բնական ռեսուրսների տնտեսական գնահատումը:
- 2) Շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռության խախտումը:
- 3) Բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումը, գնահատումը և վերահսկումը:
- 4) Ցամաքի տարածքի որևէ տեղամասում միջավայրի առանձին տարրերի պահպանությունը:

8) Գետի անկումը 2400 մ է, երկարությունը՝ 800 կմ: Գետի միջին թեքությունը կլինի.

- 1) 3 մ/կմ
- 2) 8 մ/կմ
- 3) 2 մ/կմ
- 4) 4 մ/կմ


9) Ո՞ր տառով է նշված խառնարանը.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



10) Նկարում պատկերվածը ո՞ր կլիմայական գոտուն է բնորոշ.

- 1) հասարակածային
- 2) մերձարևադարձային
- 3) բարեխառն
- 4) արկտիկական



11) Անտարկտիդայի ափերը ողողող ծովերն են.

- 1) Կարայի և Բաֆինի
- 2) Բարենցի և Նորվեգական
- 3) Անունդսենի և Ռոսսի
- 4) Սպիտակ և Յուսիսային

12) Տափաստանների զոնային բնորոշ բուսատեսակներ են.

- 1) կակտուսը և օշինդրը
- 2) փետրախոտը և սիզախոտը
- 3) եղևին և սոճին
- 4) կեչին և բոխին

13) Լեռնաշղթան ունի հյուսիս-հարավ ձգվածություն, եզերում է մայրցամաքը արևմուտքից: Թարգմանաբար նշանակում է «Պղնձե լեռներ»: Այդ լեռնաշղթան է.

- 1) Անդերը
- 2) Ուրալյանը
- 3) Ալպերը
- 4) Հիմալայները

14 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Աֆրիկայում մնացորդային ծագում ունեն Նյասա և Տանզանիկա լճերը:
- 2) Ժամանակավոր հոսք ունեցող գետերը Ավստրալիայում կոչվում են քրիկներ:
- 3) Եվրասիայի ամենաբարձր լեռը Մոնբլանն է:
- 4) Հարավային Ամերիկան Անտարկտիդայից բաժանվում է Բերինգի նեղուցով:

15 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Ավստրալիան ամենախոնավ մայրցամաքն է:
- 2) Ըստ բարձրության մթնոլորտային ճնշումը նվազում է:
- 3) Մշտապես արևադարձերից հասարակած փչող քամիները կոչվում են բրիզներ:
- 4) Աֆրիկայի կլիմայի ձևավորման վրա մեծ է մուսսոնների ազդեցությունը:

16 **«Լիճ-մայրցամաք» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Տիտիկակա - Ավստրալիա
- 2) Բայկալ – Հյուսիսային Ամերիկա
- 3) Էյր - Եվրասիա
- 4) Չադ - Աֆրիկա

17 **«Ծոց-օվկիանոս» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Մեքսիկական – Ատլանտյան
- 2) Բիսկայան – Հնդկական
- 3) Բենգալական – Հյուսիսային Սառուցյալ
- 4) Գվինեական - Խաղաղ

18 **Միջագետքի դաշտավայրով հոսող գետեր են.**

- 1) Ինդոսն ու Գանգեսը
- 2) Լենան և Օբը
- 3) Տիգրիսը և Եփրատը
- 4) Ամուդարյան և Սիրդարյան

63 **Ընտրել միակ սխալ պատասխանը Մեծ Բրիտանիայի համար.**

- 1) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է :
- 2) Բարձր է ուրբանիզացման մակարդակը:
- 3) Արդյունաբերության առաջատար ճյուղը մեքենաշինությունն է:
- 4) Առևտրական նավատորմն իր ջրատարողությամբ աշխարհում առաջատարներից է:

64 **Ընտրել ճիշտ պատասխանը.**

- 1) Ցայտուն արտահայտված է երիտասարդ հրաբխականությունը:
- 2) Հայկական լեռնաշխարհը միջին բարձրությամբ զիջում է Իրանական և Փոքրասիական բարձրավանդակներին:
- 3) Հայկական լեռնաշխարհը հարավից եզերում է Փոքր Կովկասը:
- 4) Արագածը և Նեմրուքը գործող հրաբուխներ են:

65 **« Լանդշաֆտային գոտի – հողային տիպ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.**

- 1) մերձալպյան և ալպյան - դարչնագույն հողեր
- 2) լեռնաանտառային - կուլտուր-ռոտզելի հողեր
- 3) լեռնատափաստանային - լեռնային սևահողեր
- 4) անապատակիսանապատային - կարմրահողեր

66 **Ընտրել մարզերի և քաղաքների անվանումների տրված համապատասխանության ճիշտ շարքը.**

- | | |
|----------------|-------------|
| 1. Լոռի | ա. Սիսիան |
| 2. Սյունիք | բ. Մարտունի |
| 3. Գեղարքունիք | գ. Ալավերդի |
| 4. Տավուշ | դ. Դիլիջան |

- 1) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
- 3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

67 **Հայաստանի թեթև արդյունաբերության զարգացմանը նպաստել է.**

- 1) ջրային ռեսուրսների առկայությունը
- 2) սննդի արդյունաբերության զարգացումը
- 3) աշխատանքային ռեսուրսների առկայությունը
- 4) հողային ռեսուրսների առկայությունը

68 **Ընտրել ՀՀ գետերի ճիշտ շարքը՝ ըստ նրանց երկարությունների նվազման.**

- 1) Ախուրյան, Քասախ, Հրազդան, Ազատ
- 2) Ախուրյան, Հրազդան, Քասախ, Ազատ
- 3) Հրազդան, Ախուրյան, Ազատ, Քասախ
- 4) Ազատ, Ախուրյան, Քասախ, Հրազդան

57 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Ջրակայուն առաջին շերտի վրա տեղադրված ստորերկրյա ջրերը կոչվում են արտեզյան:
- 2) Օվկիանոսների հատակի մինչև 200 մ խորությունները կոչվում են մայրցամաքային ծանծաղուտ:
- 3) Շարժման սեփական միջոցներ ունեցող ջրային կենդանիները կոչվում են պլանկտոն:
- 4) Տեղատվությունը օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացման երևույթն է:

58 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Մթնոլորտային նորմալ ճնշումը հավասար է սնդիկի սյան 670 մմ:
- 2) Ջերմաստիճանի տատանման տարեկան լայնույթը մեծ է հասարակածային շրջաններում:
- 3) Ցիկլոնը մթնոլորտային ցածր ճնշման մարզ է:
- 4) Ներքնոլորտում ըստ բարձրության օդի ջերմաստիճանը բարձրանում է:

59 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Մեքենաշինության մետաղատար ճյուղերը տեղաբաշխվում են գիտական կենտրոնների մոտ:
- 2) Արդյունաբերության բնորոշ է գծային տեղաբաշխումը:
- 3) Մեքենաշինության գիտատար ճյուղերը տեղաբաշխվում են մետալուրգիական բազաների մոտ:
- 4) Ծանր գունավոր մետաղների ձուլման ձեռնարկությունները տեղաբաշխվում են հումքային բազաների մոտ:

60 Մեռատարիքային բուրգը բնորոշ է.

- 1) Ճապոնիային
- 2) Ռուսաստանին
- 3) Մեծ Բրիտանիային
- 4) Նիգերիային



61 Այդ պետությունը պետական կառավարման ձևով խորհրդարանական հանրապետություն է: Քրոնի պաշարներով աշխարհի առաջատար երկրներից է: Մայրաքաղաքը բնակչության թվով երկրորդ քաղաքն է: Այդ պետությունն է.

- 1) Գերմանիան
- 2) Իտալիան
- 3) Ֆրանսիան
- 4) Թուրքիան

62 Ընտրել ճիշտ պատասխանը.


- 1) Ջարգացող երկրներում բարձր է ուրբանիզացման աճի տեմպերը:
- 2) Մեգալոպոլիսները և ագլոմերացիաները բնակավայրերի պարզ ձևեր են:
- 3) Ավստրալիան և Ռուսաստանը խտաբնակ երկրներ են:
- 4) Հինդուիզմը և բուդդիզմը ազգային կրոններ են:

19 Քարտեզի վրա ո՞ր տառով է նշված Նեղոս գետը.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ

20 Քարտեզի վրա Ալժիր պետությունը ո՞ր տառով է նշված.

- 1) Է
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ




- 21 Բնակչության թվի կտրուկ աճը՝ ծնելիության բարձր մակարդակի պահպանման և մահացության էական կրճատման հետևանքով կոչվում է.
- 1) ժողովրդագրական պայթյուն
 - 2) ժողովրդագրական ճգնաժամ
 - 3) ժողովրդագրական քաղաքականություն
 - 4) բնակչության վերարտադրություն
- 22 Ընհանուր ծագմամբ, ժառանգաբար փոխանցվող արտաքին ֆիզիկական և մարդաբանական հատկանիշներով իրար նման մարդկանց պատմականորեն ձևավորված խումբը կոչվում է.
- 1) էթնոս
 - 2) ազգ
 - 3) ռասա
 - 4) աշխատանքային ռեսուրսներ
- 23 Դա արդյունաբերության ճյուղերից է, աշխատատար է և գիտատար, որի պատճառով տեղաբաշխված է խոշոր քաղաքներում: Այդ ճյուղն է .
- 1) մեքենաշինություն
 - 2) մետաղաձուլություն
 - 3) վառելիքային արդյունաբերություն
 - 4) սննդի արդյունաբերություն
- 24 Երկրի տրանսպորտային ուղիների երկարությունը 120000կմ է, երկրի մակերեսը՝ 80000կմ²: Տրանսպորտային ցանցի խտությունը կլիմի.
- 1) 0.5 կմ/կմ²
 - 2) 2.5 կմ/կմ²
 - 3) 1.5կմ/կմ²
 - 4) 4 կմ/կմ²
- 25 «Ժողովուրդ-կրոն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) արաբներ - մահմեդականություն
 - 2) թուրքեր- բուդդայականություն
 - 3) ֆրանսիացիներ-քրիստոնեություն
 - 4) հրեաներ- հուդայականություն
- 26 «Պետություն – կառավարման ձև» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.
- 1) Ֆրանսիա - հանրապետություն
 - 2) Հնդկաստան – միապետություն
 - 3) Սաուդյան Արաբիա - հանրապետություն
 - 4) Իտալիա - միապետություն
- 27 «Պետություն - բուսաբուծության մասնագիտացման ճյուղ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը.
- 1) ԱՄՆ - եգիպտացորեն
 - 2) Չինաստան – բրինձ
 - 3) Բրազիլիա - սուրճ
 - 4) Մեծ Բրիտանիա - բամբակենի

- 51 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Տվյալ պահին միևնույն միջօրեականի բոլոր կետերում գրանցված ժամանակը կոչվում է գոտիական:
 - 2) Տարվա ընթացքում հասարակածի վրա կեսօրին Արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ միշտ 90⁰ է:
 - 3) Հայաստանի Հանրապետությունը գտնվում է հինգերորդ ժամային գոտում:
 - 4) Արեգակի ամենաբարձր դիրքը հորիզոնի նկատմամբ Երևանում լինում է հունիսի 22-ին:
- 52 Որքա՞ն է հյուսիս-արևելյան կողմի ազիմուտը.
- 1) 45⁰
 - 2) 225⁰
 - 3) 135⁰
 - 4) 90⁰
- 53 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Ստորերկրյա ջրերի բնական ելքը երկրի մակերևույթ կոչվում է աղբյուր:
 - 2) Օվկիանոսի ջրի միջին աղիությունը կազմում է 33 ‰:
 - 3) Երկրի մակերևույթով իր առաջացրած հունով ջրի մշտական հոսքը կոչվում է գետահովիտ:
 - 4) Ցունամիները առաջանում են մշտական քամիների ներգործությամբ:
- 54 Ընտրել բնության բաղադրիչների միակ ճիշտ զուգորդությունը.
- 1) մուսոնային կլիմա - 200-300մմ - ամառ
 - 2) խիստ ցամաքային կլիմա - 100-200մմ - ամապատ
 - 3) միջերկրածովային կլիմա - 500-600մմ - սավանա
 - 4) ծովային կլիմա - 700-800մմ - տափաստան
- 55 Կղզին կղզիախմբում առաջինն է իր մեծությամբ, այստեղ է գտնվում երկրի մայրաքաղաքը և աշխարհի խոշորագույն քաղաքներից մեկը: Այդ կղզին է.
- 1) Հոկայդոն
 - 2) Ճավան
 - 3) Կալիմանտան
 - 4) Հոնսյուն
- 56 Ընտրել ճիշտ պատասխանը.
- 1) Կովկասյան և Ուրալյան լեռներն ընկած են Ալպ-Հիմալայան գետսինկլինալի տարածքում:
 - 2) Ալպերը ձևավորվել է Խաղաղօվկիանոսյան գետսինկլինալի տարածքում:
 - 3) Եվրասիայի որոշ տեղամասեր մտել են Գոնդվանայի կազմի մեջ:
 - 4) Հարավային Ամերիկայի մեծ մասը մտել է Լավրասիայի կազմի մեջ:

49 Քարտեզի վրա Բազումի լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



50 Քարտեզի վրա Կապան քաղաքը ո՞ր տառով է նշված.

- 1) Է
- 2) Ը
- 3) Ե
- 4) Զ

28 Ընտրել ճիշտ պատասխանը.

- 1) Քիմիական արդյունաբերությանը յուրահատուկ է ցրված տեղաբաշխումը:
- 2) Թեթև գունավոր մետաղների արտադրությունը էներգատար է:
- 3) Աշխարհի մեքենաշինական արտադրանքի կեսը թողարկում են զարգացող երկրները:
- 4) Նավթի գլխավոր արտահանող երկիրը Չինաստանն է:

29 Բնակչության բարձր բնական աճը բնորոշ է.

- 1) Ուկրաինային և Թուրքիային
- 2) Ռուսաստանին և Ֆրանսիային
- 3) Իրանին և Նիգերիային
- 4) Մեծ Բրիտանիային և Գերմանիային

30 Դեպի ծով ելք չունեցող պետություններ են.

- 1) Ճապոնիան և Մոնղոլիան
- 2) Չիլին և Արգենտինան
- 3) Ալժիրը և Սուդանը
- 4) Շվեյցարիան և Չեխիան

31 «Պետություն-նավահանգիստ» սկզբունքով կազմված զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Հնդկաստան – Ռիգա
- 2) Բրազիլիա – Ռոտերդամ
- 3) Ֆրանսիա – Մարսել
- 4) Ավստրալիա – Տոկիո

32 Չինաստանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Տարածքի մեծությամբ աշխարհում առաջինն է:
- 2) Ունի ուրբանիզացման բարձր մակարդակ:
- 3) Ածխի և պողպատի արտադրությամբ աշխարհում առաջինն է:
- 4) Արդյունաբերության գլխավոր կենտրոնները գտնվում են արևմտյան մասում:

33 100 մլն – ից ավել բնակչություն ունեցող երկրներ են.

- 1) Եգիպտոսը և Գերմանիան
- 2) Բրազիլիան և Արգենտինան
- 3) Կանադան և Մեքսիկան
- 4) Ճապոնիան և Ինդոնեզիան

34 Սուրճի մշակությամբ առաջատար երկրներ են.

- 1) Կանադան և Թուրքիան
- 2) Կոլումբիան և Բրազիլիան
- 3) Ֆրանսիան և Հունաստանը
- 4) Հնդկաստանը և Իրանը

35 Զայկական լեռնաշխարհի եզրային ծալքաբեկորավոր լեռնաշղթա չէ.

- 1) Արևելյան Պոնտոսը
- 2) Արևելյան Տավրոսը
- 3) Զայկական Պարը
- 4) Փոքր Կովկասը

36 Տրված «լեռնագագաթ - բարձրություն» զույգերից ընտրել ճիշտը.

- 1) Աժդահակ – 3597մ
- 2) Նեմրոս– 2250մ
- 3) Արագած - 4400մ
- 4) Սիփան - 5165 մ

37 ԶԶ-ում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը (- 46° C) նկատվել է.

- 1) Ապարանի դաշտում
- 2) Աշոցքի սարահարթում
- 3) Սևանի ավազանում
- 4) Արագած լեռնագանգվածում

38 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) ԶԶ քաղցրահամ ջրի մեծ մասը կուտակված է Սևանա լճում:
- 2) ԶԶ-ում ամենաշատ տեղումները թափվում են Արարատյան դաշտում:
- 3) ԶԶ տարածքի մոտ 82% - ը կազմում են հարթավայրերը:
- 4) Արաքսի ավազանին պատկանող գետերն ունեն սառցադաշտային սնում:

39 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ԶԶ բնակչության սեռային կազմում գերակշռում են կանայք:
- 2) ԶԶ-ն ազգային կազմով միատարր երկիր է:
- 3) ԶԶ-ն բնակչության թվով գերազանցում է Ադրբեջանին և Թուրքիային:
- 4) ԶԶ բնակչության կեսից ավելին բնակվում են մինչև 1000մ բարձրություններում:

40 Ոսկու հանքավայրեր են.

- 1) Ագարակը և Սվարանցը
- 2) Արթիկը և Քաջարանը
- 3) Սոթքը և Մեղրածորը
- 4) Շամլուղը և Կապանը

41 ԶԶ ամենախոշոր ջրամբարն է.

- 1) Սպանդարյանի
- 2) Կեչուտի
- 3) Ախուրյանի
- 4) Ապարանի

42 ԶԶ խաղողագործության զարգացման հիմնական շրջանն է.

- 1) Արարատյան դաշտը
- 2) Լոռվա դաշտը
- 3) Շիրակի դաշտը
- 4) Սևանի ավազանը

43 ԶԶ ամենահզոր էլեկտրակայանն է.

- 1) Զրազդանի ջերմաէլեկտրակայանը
- 2) Տաթևի ջրաէլեկտրակայանը
- 3) Վանաձորի ջերմաէլեկտրակայանը
- 4) Երևանի ջերմաէլեկտրակայանը

44 Սպառվող վերականգնվող ռեսուրսներ են.

- 1) բույսերը և կենդանիները
- 2) նավթը և քարածուխը
- 3) երկաթը և մանգանը
- 4) տուֆը և բազալտը

45 Զողային ռեսուրսներով հարուստ երկիր է

- 1) Ճապոնիան
- 2) Զայաստանը
- 3) Կանադան
- 4) Եգիպտոսը

46 Զրերի մաքրման եղանակ չէ.

- 1) մեխանիկական
- 2) կենսաբանական
- 3) ֆիզիկաքիմիական
- 4) երկրաբանական

47 Մթնոլորտը առավելապես աղտոտվում է.

- 1) ջրային էլեկտրակայաններից
- 2) ջերմային էլեկտրակայաններից
- 3) ջերմաստիճանային շրջադասություններից
- 4) սանիտարական անտառահատումներից

48 Քարոլորտի վերին շերտի, մթնոլորտի ստորին շերտի, ամբողջ ջրոլորտի, կենսոլորտի և մարդոլորտի միասնությունը կոչվում է

- 1) աշխարհագրական թաղանթ
- 2) աշխարհագրական գոտի
- 3) բնական զոնա
- 4) մայրցամաք